




Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտերեւագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported CC BY NC SA License.

Դու կարող ես.

ստեղծել և տարածել նյութը ցանկացած մեդիայով կամ կոդով
մեղմելով կամ ոչնչացնելով առկա նյութը առանց ու իրենք նոր

You are free to:

Share – copy and redistribute the material in any medium or format
Adapt – remix, transform, and build upon the material

087.1:58
9

Ռ. ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

087.1:58

ՄԻՋԱՏԱԿԵՐ ԲՈՒՅՍԵՐ

(ԲՈՒՍԱԲԱՆԱԿԱՆ ԶՐՈՒՅՑ)

135156



Գրառեպ. № 689(բ) Պ. № 1944 Պեհրառ. № 377. Տ. 5000

Պեհրառի IV Տպարան Լեհրնականում

ՄԻՋԱՏԱԿԵՐ ԲՈՒՅՍԵՐ

Լինում ե չի լինում մի մեղրաճանճ: Շատ եր սիրում
նա աշխատել, ինչպես և բոլոր մեղրաճանճերը: Ապրում
եր իր հայրենակիցների հետ, գոհ եր կյանքից, փոշ փոքր
առանց պատճառի չեր նեղում:

Ամեն որ, լավ յեղանակին, յերբ արևը փայտալում ե
մեղմ ու տաքուկ ճառագայթներով, մեր մեղրաճանճը ո՞ր
կերուհիների հետ դուրս կըգար փեթակից, կուղեվորվե,
ծաղկավետ հովիտները, տղզալով մեկ ծաղիկից մյուս ծա-
ղիկը կանցներ՝ ծաղկեփողի հավաքելով, ծաղկե հյութ օը-
ծելով:

Ամեն մի բույս, փոր պայծառ և հոտավետ ծաղիկ՝ ե
ուներ, կըգրավեր նրան, ներս մտնելով ծաղկի խորքը՝ նա
հյութից անուշ կաներ, յերբեմն ել կանաչ տերևի վրա կը
նստեր հանգստանալու, կընստեր հանգիստ, մինչև փոր
հանկարծ թշնամու հոտը զգալով՝ շանցներ մի ուրիշ բույ-
սի վրա:

Իսկի հանգիստ կըթողնե՞ին նրան թռչունները. քա-
նի անգամ ելին կտցահարել իրեն, թեև անաջող: Շատ
անգամ այն ե՝ թռչունի բերանում պիպի ճմլվեր, բայց ի-
րեն չկորցնելով՝ թռչունի լեզուն խալթոցով խալթում
դուրս նետվում:

Մեղրաճանճը, փորի մասին պատմում եմ, շատ փոր-

ճանքների եր հանդիպել, և միշտ ել ազատվել. իսկ նրա ընկերները հաճախ անզգուշությունից զոհվել էլին:

Նա թշնամուն աչքով լավ չեր տեսնում, հեռվից չեր նկատում մոտեցող վտանգը, բայց բավական եր՝ թշնամին մոտենար, մեր ճանճը մի տեսակ անհանգստություն եր զգում... Ավելի հաճախ այնպես եր լինում, վոր թշնամին անզգուշաբար մոտենում եր մեղրաճանճին այնպես, վոր իր ստվերը ճանճի վրա չեր ընկնում... Այդ արդեն բավական եր, մեղրաճանճի աչքերը շատ լավ նկատում են ստվերը, և նա թռչում եր իր տեղից, փախչում:

Թեև նա թունավոր խալթոց ուներ և միջատները խուսափում էին նրանից, թեև թռչուններն ել նրան հաճախ չէին դիպչում, բայց մեղրաճանճը ելի անհանգիստ եր...

Բոլորովին չեր վախենում նա բույսերից. համարձակ նստում եր մեկ ծաղկի վրա, ապա անցնում մյուսին... Ինչ կարող ե անել բույսը — վռչինչ: Ինչքան կուզես՝ ծաղկեփողի հավաքիր, ինչքան կուզես՝ ծաղկե հյութ ծծիր, — ո՛վ ե արգելողը...

Յ Ո Ղ Ի Կ Ը

Բայց մի որ մեղրաճանճը զգաց, վոր նա հայրենակիցների հետ իրենց փեթակով մի նոր տեղ փոխադրվեց: Անտառում չէին այլևս: Յերկոտանի զարմանալի չերկար կենդանին գտավ անտառում իրենց բնակարանը ու տեղափոխեց նոր տեղ:

Նոր հայրենիքը վատ չեր: Կային և անտառներ և ծաղկավետ դաշտեր:

Տեղ-տեղ ճահիճներ ել կային: Ահա այդ ճահիճների բավականին ծաղիկներ էին բուսնում, ծաղիկներ, վոր իրենց սլաճառ գույներով միշտ գրավում էին մեղրաճանճերին:

Մեր մեղրաճանճն ել հաճախ ճահիճների կողմն եր

անցնում: Մեկ ուր մի զարմանալի և անսովոր դեպք պատահեց: Բույսերի միջից մեկը նրան գրավեց:



Յ Ո Ղ Ի Կ.

Drosera rotundifolia.



(Նշկաւ 1)

Փոքրիկ բույս էր: Սպիտակ ծաղիկները նստած էլին չերկար ցողունի վրա, իսկ ցողունի ներքևի մասում, գետնից տարբեր ուղղությամբ, չերկար տերևներ էլին ձգվում, նրանց ծայրերը աստիճանաբար լայնանում էլին և փոքր ինչ տափակ (գնդի) շրջանաձև կամ ձվաձև թիթեղանման տերևի էլին նմանվում: Կանաչ կարմրավուն գույն ունեցին: Թիթեղի չերեսին բազմաթիվ գնդասեղաձև մազիկներ էլին տնկված: Ահա այդ կարմրավուն մազիկների փայլուն գլուխները հեռվից գրավեցին մեղրաճանճին:

Յուրաքանչյուր թելիկի վրա ինչ վոր հեղուկի կաթիլ էր փայլում: Յերբ արևի ճառագայթներն ընկնում էլն կաթիլների վրա, նրանք փայլում էլին, կարծես մաշկազանքի ցողեր լինեցին:

Մեղրաճանճն ուրախացավ, մտացեց՝ անպատճառ

ծաղկեհյուսթ կըլինի այն կաթիլը, վոր փայլում եր անծանոթ բույսի վրա:

Մոտեցավ բույսի կանաչ կարմագուշն թիթեղներին, բայց դեռ չնստած՝ փոքր ինչ փորձեց փայլուն հյուսթը— ամենևին մեղրի համ չուներ: Ի՞նչ կարող եր լինել: Փորձեց հարմար նստել. այն ե ուզում եր նստել մի քանի թելիկների վրա, հանկարծ զգաց, վոր թաթերից մեկը կըպել եր հյուսթին: Փորձեց ազատել թաթը. ազատեց, բայց մյուս թաթը կպավ մի ուրիշ թելիկի...

Տարորինակ բան: Այժմեզ բույս: Այս ի՞նչ անհյուսթընկալ բույս եր: Մեղրաճանճը ավելի ևս զգաց, վոր նրան փտանգ եր սպառնում նրան գրավողը վոչ թե մեղրահյուսթ, ծաղկեհյուսթ եր, այլ մի խաբեբա, կաշուն հյուսթ...

Դեռ նա փորձում եր ազատվել թելիկներից, չերբ մի ուրիշ փոքրիկ ճանճ նստեց խաբուսիկ փայլուն կաթիլներին վա:

Մեղրաճանճը հավաքեց իր բոլոր ուժերը, ճիգ գործեց, վերջապես մի կերպ կարողացավ ազատվել զարմանալի, անծանոթ բույսի կաշուն գնդաձև ճիրաններից:

Թողնենք մեր բարեկամին, թող գնա փեթակը, փոքր ինչ հանգստանա, թաթերը ու թևերը կարգի բերի. հիմա տեսնենք՝ ինչ չեղավ այն փոքրիկ ճանճը, վոր ընկավ թելիկների վրա:

Ճանճը փոքր եր, նրա ազատվելու ճիգերը զուր անցան: Յերբ վտառերն եր ազատում, փորն եր հեղուկի մեջ ընկնում. չերբ փորն եր մի կերպ ազատում, վտառերն ելին խրվում: Հնար չեղավ ազատվելու:

Թևերը կպել ելին իրար, հեղուկը ավելանում եր: Այդ դեռ վոչինչ. չեթե միայն հեղուկը լիներ, ելի գուցե ճանճը չերկար շարշարվելուց հետո մի կերպ կարողանար ա-
տավել:

Հանկարծ թելիկները շարժվեցին, ճանճի շուրջը զրտնաված մազիկները թեքվեցին, թեքվեցին ճանճի վրա ու ամեն կողմից ճզմեցին նրան. ճանճը ավելի ևս խրվեց հե-

դուկի մեջ, իսկ թելիկները նրան բռնում ելին, կարծես վախենալով՝ չլինի թե փախչի:

Ազատվելու մասին այլևս մտածել չեր կարելի: Խեղճ ճանճ: Փորձեց, մի անգամ ել փորձեց կաշուն հեղուկից ու մազիկներից ազատվել, բայց զուր. մազիկները պինդ թռնել ելին նրան: Ճանճն այժմ ծածկվել եր կաշուն հեղուկով: Միքիչ անց՝ ավելի շատ հեղուկ ծորաց. ճանճը հեղուկի մեջ եր: Անշարժ մնաց, այլևս անկարելի չեր թե վերը թափահարել, տզոցն ել դադարեց...

Գնդասեղաձև մազիկների մեծ մասը թեքվել եր դեպի ճանճը և նրան պինդ սեղմել, ճզմել:

Յերկու որից հետո, յերբ մեր բարեկամ մեղրաճանճը նորից անցնում եր այդ գիշատիչ բույսի մոտով, պատահմամբ շատ մոտիկից անցավ և մոռանալով առաջին փորձը, այն ե նորից եր պատրաստվում նստելու բույսի վրա և նրա հյուսթը ծծելու, բայց մի բան նրան չեւ մղեց, նա զգաց իսկույն վտանգը և հեռացավ:

Այդ միջոցին եր ահա, չեթե շատ մոտենար մեղրաճանճը, մի ցավալի պատկեր կը տեսներ: Գիշատիչ բույսի վրա չերևում ելին միջատների մնացորդներ, միջատների մորմնի կայծր մասեր՝ վահանակներ, վոտքերի կտորներ, — իսկ փափուկ մասերը չկային:

Բայց այդ ի՞նչ գիշատիչ բույս եր: Այդ ի՞նչ բույս եր, վորի զնդաձև տերևի վրա նստում ելին միջատները, ապա մի քանի որից հետո նրանցից կարծր թաղանթներն ելին մնում միայն:

Այո, իսկապես գիշատիչ ե, միջատակեր բույս ե: Գիտնականները դրա անունը ցողիկ են դրել: Թե ինչու այդպես են անվանել, դժվար չե հասկանալ — հիշենք, վոր նրա մազիկների գլուխների վրա արևի ճառագայթներից վաղորդյան ցողի նման կաշուն հեղուկի կաթիլներ են փայլում:

Յեվ գիտնականները հետաքրքրվեցին նրանով: Յերբ

լավ ծանոթացան, տեսան, վոր նա իսկապես միջատներ են ուտում: Ուտում է այսպես.

Միջատը, ինչպես տեսանք, նստում է գնդաձև տերևի վրա, գնդասեղաձև մազիկների վրայի կաշուն հեղուկը չի թողնում միջատին դուրս ծլկվել, մազիկները թեքվում են և միջատին սեղմելով ամելի խորը տանում: Ամելի և ամելի շատ հեղուկ է ծորում և այդ հեղուկից լուծվում են միջատի փափուկ մասերը, ճիշտ այնպես, ինչպես մեր ստամոքսի մեջ լուծվում է սնունդը:

Մսի կտորը, հացի սպիտակուցի կտորը, ընկնելով մեր ստամոքսը, լուծվում են այն հեղուկից, վոր դուրս է գալիս ստամոքսի պատից:

Հենց այդպիսի հեղուկի նման է և ցողիկի հյուսթը:

Միջատի փափուկ մասերը լուծվում են, այդ լուծույթը ծծվում է տերևի ներսը, ապա այդ սնունդով կերակրվում է բույսը: Նա միջատների մսից իր կյանքի համար անհրաժեշտ մի նույթ է ստանում, վորի անունը ազոտ է: Այդ հյուսթը բոլոր բույսերին ել անհրաժեշտ է և գետնից է ստացվում. բայց միջատակեր բույսերն անընդունակ են գիտնից լրիվ չափով ազոտ ստանալու, և այն հողը, որ նրանք բուսնում են, այնքան ել շատ ազոտ չի պարունակում. և այդ և պատճառը, վոր հարկավոր, չափազանց անհրաժեշտ ազոտը նրանք միջատների մսից են ստանում:

ՍԱՓՈՐԻԿԸ

Մեկ որ մեղրաճանճը փեթակից բավականին հեռու թռավ: Ճանապարհին, անտառի մեջ նա ապակեծածկ մի մեծ շինություն տեսավ: Յերկար ու բարձր շենք եր' չորս կողմից ապակով ծածկված: Մեղրաճանճը հետաքրքրվեց, մոտ թռավ, ուր ապակիներից մեկի վրա ճեղքվածք կար թռանց յերկար մտածելու ծակով ներս մտավ:

Վերջին տաք երեսերսը: Յեւ ինչ խիտ ելին բազմած բույսերը: Չարմանալի բույսեր կային, թե անտառում, թե այդ կողմերում բոլորովին չէր կարելի գտնել այդ բույսերից:

Նարնջի ծառ, կիտրոնի ծառ, արմավենիներ. արմավենիներից մեկը եր հոյակապ փետրավոր գլուխը մինչև ապակեծածկ առաստաղն եր հասցրել...

Իսկ ծաղիկներ... Մեղրաճանճը ջերմոցումն եր. — մի այնպիսի շենք ե այդ, ուր կարելի չէ նույնիսկ ցուրտ չերկրներում պահպանել, տճեցնել արևադարձային տաք տաք չերկրների բույսերը:

Մի բույս նրան ամենից շատ գրավեց. զարմանալի տերևներ ուներ այն: Լայնացած տերևակոթը նեղանում եր ձողուձև, կռանում, ապա նորից լայնանում և այնպես, կարծես թե տերևակոթի ծայրին սափորիկ եր նստած:



Սափորիկ. *Nepenthes villosa*

Ն. կ. ր. 2

Սափորիկի մեկ չեզրից խուփի ձևով բույսի իսկական լայն տերևն եր բարձրանում:

Ուրեմն այդ բույսի տերևը բոլորովին ձևափոխված եր: Տերևակոթից սափորիկն ե առաջացել, իսկ տերևի լայն մասից (թիթեղից) սափորիկի խուփը:

Մեղրաճանճը շատ հետաքրքրվեց. իջավ տերևակոթի վրա, զգուշությամբ անցավ սափորիկի ծայ-

րը: Այդ միջոցին ջերմոցը ներս թռավ մի միջատ, նա ել մոտեցավ զարմանալի բույսին, նորից սափորիկի ծայրին, նայեց ներս, փոքր ինչ գլուխը ներս թեքեց, նրա վտարերը սահեցին... սկսեց իջնել... գնաց... գնաց. միջատը չերկար ժամանակ չերկաց, ապա լավեց նրա սզողոցը սափորիկի ներսից... Տզղաց, սզղաց չերկար, մինչև վոր բոլորովին լռեց:



Նկար 3

Թե ինչո՞ւ մեղրաճանճն ել չհետե-
վեց նրան, ո՞վ գիտե. բայց նա նստած
եր տեղում, չեր շարժվում... ելի մի
քանի միջատներ ներս մտան սափորի-
կըն ու չվերադարձան — միայն նրանց
վերջին տզգոցն եր լսվում։ Քանի՜-քա-
նի՜ բզեզներ մտան ու մնացին մեջը։
Սափորիկի ներսից շարունակ տարբեր
լեղանակների տզգոց եր լսվում։

Մեղրաճանճը շատ հետաքրքրվեց...
Այդ ինչո՞ւ չեն այդքան ձայն հանում.
հո՞ մեղր չի այնտեղ։ Տզգոցը նրան
գրավեց։ Փորձեց՝ ներս մտնի։ Առաջ
անցավ, հետազոտեց սափորիկի լեղրը,

մի փոքր ներս մտավ — վտռեցին. վո՞րքան սահուն
ե ներսից սափորիկը... Մեղրաճանճին ծանոթ մոմանման
նյութով եր ծծված սափորիկի ներսի պատը — ահա թե
ինչո՞ւ այնքան սահուն եր։ Գնաց ելի առաջ, զգաց, վոր
մազիկների վրայով եր իջնում... Խորն իջավ... բայց ան-
զգուշությունից հանկած այնպես ցած սահեց, վոր քիչ եր
մնացել սափորիկի հատակը գլորվեց — մի կերպ բռնվեց
ատից...

Նայեց շուրջը, դուրս գալ եր հարկավոր. ներքևը —
ո՞ւթ եր, վերևից — լույս. չեք, չկար. թալակն եր ընկել,
գողիկից վտանգավոր թալակ։ Ի՞նչ աներ։ Ել հյութը փոր-
ձելու մտադրություն չուներ։ Փորձեց՝ վերև բարձրանալ...
բայց հազիվ մի քանի բալլ արավ — գլուխը դիպավ ներքև
ուղղած սրածայր մազիկներին, նորից իջավ... սկսեց հե-
տադոտել պատերը... Ա՛յ քեզ բան... ներքև ուղղած մա-
զիկները բոլորովին վատացրին մեղրաճանճի դրությունը...
Յե՛վ ինչ խորամանկ բույս ե... Մազիկներով սափորիկի
ներսը կարելի չե իջնել, նրանց վրայով վայր սահել, բայց
ապա մեկ փորձիր դուրս գալ — մազիկներն իրենց ծայրե-
րով ծակոտում են, չեն թողնում՝ վեր բարձրանալ...

Մեղրաճանճը գլուխը ծակծկելու մտադրութիւնն չուներ: Ցած իջավ, շատ չգնած, զգաց, վոր սափորիկի հատակը ծածկված և հեղուկով... նրա միջից մեկ-մեկ տրզոց եր լավում... Քանի-քանի միջատներ ելին խեղդված ընկած նրա մեջ...

Մեղրաճանճն անհանգստացավ. արդեն թևերը խոնավացել էին, մարմնի մազիկները՝ թրջվել: Հենց այդպես էլին բռնվել հեղուկի մեջ լողացող, խեղդվող միջատները... նրանց թևերն ել սկզբում խոնավացել էին...

Միթե ինքն ել շուտով պիտի գոհվեր: Արդյոք հնար չկար ազատվելու: Պինդ կպել եր սահուն պատից, սպասում եր հարմար ըռպելի... փորձեց թևերը թափահարել, վռչինչ, դեռ կարող էին ոգնել...

Այն ե՝ ուզում եր դուրս թռչել, չերբ հանկարծ սափորիկը ուժգին ցնցվեց...

Մի մեծ բզեզ ներս ընկավ. կարմրամարմին ռնգեղջյուր բզեզն եր: Ի հարկե պատահաբար ընկավ: Ալեկոծվեց հեղուկը, բզեզը ուժեղ եր, մարմինը՝ կարծր, նա սկսեց այս ու այն կողմ ընկնել, քիչ մնաց մեղրաճանճին ցած գլորեր: Սրածայր չեղջյուրով մի քանի տեղ ճղեց սափորիկի պատը, վեր թռավ, սափորիկի մազիկներն ել ջարդելով՝ դուրս ընկավ, ազատվեց:

Սափորիկը վիրավորված, գզգզված եր... նրա մազիկները՝ ջարդված: Մեղրաճանճին հենց այդ եր հարկավոր: Նա շտապեց այն կողմը, վորտեղ բզեզի ուժեղ հարված-ներից թեքվել, ճխլվել էին սափորիկի մազիկները: Մազիկները այլևս չէին խանդարում: Մեղրաճանճն անվտանգ անցավ այդ կողմով, շուտով դուրս չեկավ ու մի կերպ հաղիվ հազ թռչելով՝ վերջապես ազատվեց զիշատիչ սափորիկից:

Ի հարկե այժմ պարզ ե, վոր այդ սափորիկն ել գիշատիչ, միջատակեր բույսերից եր: Տեսանք՝ ինչպես էին ձևափոխվել սափորիկի տերևները... նրա միջի հյութը նույնպես սննդառու հյութ ե, այնպիսի հյութ, վորի մեջ

լուծվում է միջատների փափուկ մասը: Յեւ իսկապէս սափորիկի մեջ կարելի չէ տեսնել բազմաթիւ միջատների անմարս մնացորդներ՝ վոտքեր, թւեր...

Լուծուլթից բույսը ստանում է բույսերի համար անհրաժեշտ նյութը—ազոտ... ածխածին եւ է ստանում... նրա հայրենիքը տաք յերկրներն են, բայց կարելի չէ նրանց պահել և ցուրտ յերկրներում՝ տաք, ապակեպատ ջերմոցներում...

Կարծում եք մեղրաճանճն ալիս զբոսանքի դուրս չեկա՞ւ: Վախեցա՞ւ միջատակեր բույսերից: Ամենևին: Յեղածը մոռացա՞ւ, բայց սափորիկի վտանգը փորձով զգաց:

ՃԱՆՃԱԿԱԼԸ

Մեղրաճանճին, ինչպէս յերևում է, ջերմոցը շատ եր դուր չեկել, այնտեղ այնքան շատ ծաղիկներ կային: Ծիշտ է՝ նա սափորիկից այնքան ել չեր վախենում, հասկացա՞ւ, զգաց նրա խորամանկութիւնը, բայց յեթե սափորիկի մոտով անցնում եր—չեր մոտենում, շուտ հեռանում եր:

Սովորել եր հաճախ ջերմոցը մտնել: Մեկ ուր ել չհասկացա՞ւ, թե ինչո՞ւ չկարողացա՞ւ ջերմոցը մտնել... Չերմոցի շուրս կողմը պտտեց, կտտրած ապակին չգտա՞ւ—ա, ուրեմն նոր ապակի չե՞լին գցել—մեղրաճանճը չկարողայա՞ւ ներս մտնել, թողեց ջերմոցն ու գնաց անտառի խորքերը:

Քանի՜-քանի անգամ անտառ թռչելիս անցնում եր նա ցողիկի մոտով: Հազիւ մոտենում եր նրան, մի տեսակ անհանգստութիւն եր զգում, կարծես մի անհայտ ուժ նրան ասում եր, թե՛ ցողիկի վրա չնստես:

Անուշադիր թողնելով ցողիկին, թռչում եր ուրիշ բույսերի վրա:

Մեղրաճանճն արդեն համոզված եր, վոր բացի սափորիկից և ցողիկից՝ ուրիշից վտանգ չկար: Սափորիկը նրան ալիս ապառնալ չեր կարող, բանի վոր ջերմոցը

փակ ե. աչնտեղ, միևնույն ե, թե վոր ուզենար մանել՝
անկարելի չե... մնում ե ցողիկը. սա ել հեռվից արդեն
խմացվում եր:

Մեղրաճանճը համարձակ մոտենում եր բոլոր բույսե-
րին—կամ վրան հանգստանում, կամ ծաղկեփռի, կամ ել
ծաղկեհյութ հավաքում, նա նույնիսկ անձանոթ բույսերին
եր մոտենում: Վերջապես մեկ որ մի ուրիշ զարմանալի
բույսի հետ ել ծանոթացավ:



Ճ Ա Ն Ճ Ա Կ Ա Լ.
Dionaea muscipula.

Ն կ ա ռ 4

Սովորական բույս եր. հեռվից նրան գրավեցին գե-
ղեցիկ մանր ծաղիկները, վորոնք նստում ելին չերկար ցո-
ղունիկների վրա:

Մեղրաճանճը նստեց ծաղիկներին վրա — բան չպատահեց: Յողունիկի ներքևում, տարբեր ուղղությամբ դուրս ելին ընկած զարմանալի տերևները: Տերևակոթը յերկար եր ու լայնացած, իսկ տերևի լայն մասը յերկու մասի յեր բաժանված: Յուրաքանչյուր մասի յեզրերին փշեր ելին ցցված:

Մեղրաճանճը ծաղկից իջավ, ցողունիկի վրայով անցավ դեպի կանաչ տերևները, հասավ լայն տերևակոթին ու սպասեց: Անծանոթ բույս եր: Արդեն միտք ուներ առաջ գնալու, տերևի վրա անցնելու, բայց այդ ըոպելին մի ուրիշ ճանճ թռավ նստեց հենց նույն տերևի վրա, հազիվ նստեց նրա թիթեղների վրա, շատ չանցավ... մի թեթև ցնցում... և թիղեղի յերկու մասերը շարժվեցին ու... թըխկ... ծալվեցին... միայն լավեց ճանճի տզզոցը: Տերև վր դեռ տատանվում եր: Այդ կատարվեց հենց այն ըոպելին, յերբ մեղրաճանճն արդեն տերևի վրա պիտի անցներ: Մեղրաճանճը յետ գնաց, վտանգը զգալով, պինդ բռնվեց տերևակոթից, վոր վայր չընկներ: Յերբ նայեց տերևի կողմը... նոր բան տեսավ: Տերևը կարծես նեղացել եր, յերկարությամբ, փշերն իրար մոտ անցել:

Յեվ հենց այդպես ել եր: Տերևի յերկու մասերը միացել ելին, իսկ նրանց արանքից դուրս ելին ցցված ճանճի ու մի ուրիշ միջատի վոտքերն ու մի թևը... բռնված միջատները շարունակ տզզում ելին: Դանի գնում տզզոցը թուլանում եր:

Միթե սա ել միջատակեր բույս ե: Մեղրաճանճն առաջ գնաց դեպի տզզոցը, մոտեցավ տերևին, լավ նայեց չորս կողմը: Իսկապես քիչ առաջ բաց լայն տերևն այժմ ծալվել եր, յերկու կողմի փշերն իրար արանք մտնելով ավելի ամուր ելին սեղմել տերևի մասերը...

Մոտեցավ այն կողմը, վորտեղ դուրս ելին ցցված միջատների վոտքերը: Այո, իսկական վոտքեր ելին, վորոնք շարունակ ցնցվում ու դողում ելին: Սեղմվել, բռնվել

եյին միջատների մարմինները, իսկ վոտքերը դուրս մնացել:

Միջատների տղոցը չէր դադարում: Մեղրաճանճը ծալած տերևի վրա նստած՝ ո՞վ գիտե՝ ինչի մասին էր մտածում: Գուցե զարմանում էր, թե այդ ինչպես չեղավ, վոր միջատները բռնվեցին, իսկ ինքը՝ մեղրաճանճը՝ ահա նստած է տերևի վրա և վոչ վոք նրան չի բռնում. . . Ի՞նչ էր պատահել... մեղրաճանճի ուղեղը չկարողացավ այդ հարցը լուծել: Նա անցավ մի ուրիշ տերևի վրա: Միջատների, մանավանդ ճանճերի տղոցը շատ կողմից էր լրսվում:

Մեր մեղրաճանճը թռավ ծալած տերևից ու մի ուրիշ բաց տերևի վրա անցավ: Նստեց տերևակոթի վրա ու ըսկսեց մոտենալ թիթեղին. շատ էր մոտեցել. տերևի չերկու մասերի վրա չերեք-չերեք սրածայր փշեր նկատեց: Համարձակ անցավ տերևի վրայով, դիպավ փշերին, ահա այն է՝ պիտի տերևի մյուս կողմն անցներ — այդ ըռպելին... Թը՛խկ... տերևի չերկու մասերը խփվեցին... իրար մոտեցան... Մեղրաճանճը բռնվեց... վոտքերից մեկը փուշը ծակեց: Վորքան տղզաց, վորքան տղտղաց, այս ու այն կողմ ընկավ — իսկի դճուրս է գալիս, մարմինը սեղմվել էր...

— Այս ի՞նչ փորձանքի մեջ ընկա, ով գիտե՝ մտածեց մեղրաճանճը. մի ըռպե նրա տղոցը կտրեց... սպասեց, վիրավոր վոտը ներս քաշեց, բայց խիստ ցավ զգաց... իզուր, բոլորովին իզուր: Բույսը պինդ էր բռնել նրան. կուռ սպասում էր՝ ի՞նչ միջոցով ազատվել: Հանկարծ ըսկըսեց ավելի բարձր ձայնել, այնպես էր այս ու այն կողմ շարժվում, վոտքերով խփում, վոր տերևը ցնցվում էր: Քաշահի-քահի անգամ խալթոցը խրեց տերևի մեջ, բայց իզուր, թշնամու վրա չազդեց նրա թունավոր խալթոցը: Նորից լուռթյուն... Մեղրաճանճի լսողությանը մի ուրիշ ավելի ուժեղ տղոց հասավ — այդ էլ հարևան տերևի գերին էր: Յերբ լսեց նրա տղոցը, մեր մեղրաճանճն էլ իբրև պատասխան սկսեց տղզալ:

Ո՞վ գիտե, մինչև չերբ պիտի տղզար մեղրաճանճը, թե՛ նրա բախտից բույսի մոտով չերկու մանուկներ անցնելիս չլինելին:

Մեղրաճանճը զգաց, թե ինչպես տերերը խոնավացավ
— նրանից ինչ վոր հեղուկ սկսեց ծորալ. հեղուկն արդեն
մարմնին եր գիպել...

Ո՛ր... ինչ վատ հեղուկ եր...

Վերջին անգամ անպես տզգաց, վոր չերկու մանուկ-
ները նրա ձայնը լսեցին ու մոտ վազեցին...

— Հայկ, Հայկ, — կանչեց փոքրը. — լսո՛ւմ ես՝ ճանճն
ինչպես ե տզգում... Ո՛վ գիտե՛ սարգի վոստայնն ե ընկել...

— Վարդգես, արի մի տես, — ասաց Հայկը, նա ար-
դեն միջատակեր բույսի մոտ եր. — անա վորտեղից ե տըզ-
գոցը... ճանճը սեղմվել ե ծալած տերևի միջ... ան բույսն
ե այս, վորի մասին մեզ պատմել ե Վահանը... հիշո՛ւմ ես,
ճանճակալ միջատակեր բույսն ե...

— Այո՛, այո՛, — ուրախացավ Վարդգեսը, — սա՛ չե...
Այո՛, շատ նման ե նրա պատմածին... խեղճ ճանճ, արի,
Հայկ, ազատենք նրան, թե չե անպիտան տերևի մեջ կը
սատկի... Շատ ե տզգում, ուրեմն նոր ե ընկել... Բաց եմ
անում... խեղճ ճանճ... սպասիր մի փոքր, հիմա կաղա-
տենք...

Վարդգեսը մի փայտի կտոր վերցրեց, անցկացրեց
ծալած տերևի արանքը — տերևը քիչ բացվեց, մեղրաճանճն
իրեն ազատ զգալով, ուրախ-ուրախ նորից տզգաց, բայց
թևերը խոնավացել էին քիչ, իսկույն չկարողացավ թռչել:
Վարդգեսը ազատեց նրա վոսքը փշից, տերևի վրայից
ճանճին քաշեց տերևակոթի վրա .. Ճանճը նստել ու սպա-
սում եր, թևերը թեթև թափահարում, պիտի լավ չորա-
նային. տեղից շարժվեց, անցավ տերևակոթի չեզրը, բայց
թռչել դեռ դժվարանում եր: Վարդգեսը մի քանի անգամ
փշեց վրան, վոր խոնավացած ճանճը շուտ չորանա... Յերբ
թևերը փոքր ինչ կարգի ընկան, մեղրաճանճը մի անգամ
ել գիլ տզգոց ու վեր ցատկելով թռավ ..

— Ազատեցինք, — ասաց Վարդգեսը:

Հետո չերկուսով տերևը բոլորովին չեա ծալեց
ցին: Յեւ ի՞նչ... նրա վրա միջատների մնացորդն
չերևում, վոտքերի կտորներ, կարծր վերնաթևեր,
ներ, բեղեր:

Հայկը տերևի մեջ տեղ չերկու կողմից դուրս
վեց փշերը ցույց տալով, ասաց.

— Վարդգես, հիշում ես Վահանի ասածը չերբ ճան-
ճը նստում ե տերևի վրա, տերևի չերկու մասերը միա-
նում են, տերևը փակվում ե, իսկ այս փշերը միջատին
ծակում են և այնպես, վոր ճանճը ել դուրս գալու հնար
չի ունենում:

— Իսկ հետո: Հայկ, ի՞նչ ե լինում...

— Հետո, ախ դո՛ւ, ելի՞ մոռացար. հետո ինչ վոր
հյուլթ ե դուրս գալիս տերևից, միջատը փափկում ե և
նրա մեջ հալվում ե միջատի միսը, տերևը ներս ե ծծում
աննդառատ հյուլթը, իսկ տերևի միջից այդ կերակուրը տա-
րածվում ե բույսի մյուս մասերը... Տերևը մարսում ե մի-
ջատին...

Հայկը շեր սխալվել: Նրանց տեսած բույսը նույնպես
միջատակեր բույս եր և նրա անունը իսկապես ճանճակալ
ե: Նա միջատներով ե կերակրվում, մանավանդ ճանճերին
ե նա հեշտ բռնում ու մարսում:

Այդ բույսը, ինչպես և ցողիկն ու սափորիկը, հողից
հարկավոր չափով ազոտ ստանալ չի կարող: Առանց ազո-
տի նա ել չի կարող ապրել: Յեւ ի՞նչ անի բույսը, ազո-
տը վճռաբեղից ստանա: Նա ազոտը միջատներից ե ստա-
նում, վորովհետև մսի մեջ ազոտ կա:

Իսկ միջատներ հեշտ վորսալու համար այդ բույսերի
տերևները ձևափոխված են: Սովորական տերևով միջատ չի
բռնվի: Ինչպես ցողիկի և սափորիկի տերևն ե ձևափոխ-
ված, ձևափոխված ե և ճանճակալի տերևը: Արդեն տե-
սանք այդ կանաչ բազուկը: Ճանճակալի մարսողական
հուլթն ել մյուս միջատակեր բույսերի հյուլթերին ե նման:

Երբ ծալած տերևի արանքում միջատը մարսվում է, արմնի միայն կարծր անմարս մասերն են մնում, տերևը նորից լեռ է ծալվում, բացվում... և բույսը առնում է նոր զոհի:

Ահա այսպես եր այն ճանճակալը, վորին բիշ մնաց զոհ գնար մեր մեղրաճանճը և սղատվեց. Սակայն չեթե սղաները չլինեչին, նրան ճանճակալը անպատճառ կուտեր, կըմարսեր:

Թե ուր փախավ մեղրաճանճը, հայտնի չե, բայց միջատակեր բույսերի կողմը հա ալիս չեր չերևում...

Ծաղկի հյուլթ, ծաղկեփոշի հավաքելու ավելի ապահով տեղ եր գտել:

Փ Ա Մ Փ Շ Տ Ի Կ Ը

Տղաները, սակայն, շատ հետաքրքրվեցին միջատակեր բույսով: Մեկին հանդիպելով չենթադրեցին, թե մի ուրիշ տեսակի չել կըհանդիպեն: Գնանք նրանց լեռեից: Յերիտասարդ բնասերներ ելին՝ զինված եքսկուրսանտների անհրաժեշտ պարագաներով. ցանց, բանկաներ, տոպրակ և այլն:

— Վարդգես, արի անցնենք ահա այն ճահիճը հետազոտենք, այնտեղ շատ բան կըգտնենք...

— Գուցե փամփշտիկ գտնել ել հաջողվի—ասաց Հայկը: Վահանը ասաց, վոր նրանք ճահիճների մեջ են ապրում Հիշո՞ւմ ես. Վահանն ասաց, վոր այս ճահիճներում կըգտնենք միջատակեր փամփշտիկին: Բանկայումդ տեղ կա, թե՞ գորտերով է լցված:—Կա, կա, բայց չեա ջրային բույսերի համար հատուկ բանկա չեմ վերցրել:

Հասան ճահիճին—անցան նրա ավելի խաղաղ կողմերը՝ պաշտպանված լեղեգնով և այլ ջրային բույսերով: Միբանի անգամ գցեցին ցանցը, շարունակ խխունջներ ելին դուրս դալիս: Չորրորդ անգամ հասան նպատակին: Ջրից հանեցին մեղմ, բազմաթիվ փետրամման ճյուղավորութուններով ցողուն, տեղ-տեղ նրա վրա կանաչ բշտիկներ կային,— փամփշտիկը, փամփշտիկն է,— չերկուսն ել աղաղակեցին միաձայն:



Փամփշտիկ. *Utricularia vulgaris*.

Ն կ ա Ր Ծ

Իսկապես միջատակեր փամփշտիկ բույսն էր: Ջրից հանած ցողունն այնքան ել մեծ չէր, բշտիկները՝ մանր: Բնասերները լարված աչքերով նայեցին ջրի մակերևույթին. միքանի տեղ ջրի վրա ուղղահայաց կանաչ չճյուղա-

վորված ցուղունիկներ ելին նկատվում, իսկ սրանց վրա պայծառ դեղնագույն ծաղիկներ, մեկ տեղ չերկու ծաղիկ, մի ուրիշի վրա՝ մեկ, չերեք:

— Փամփշտիկի ծաղիկներ են— իսկույն իմացավ Հայկը և ցանց գցեց նրանց կողմը:

Փամփշտիկը ցանցով հավաքել հեշտ է, քանի վոր նա արմատներ չունի: Յերկար ստորջրյա փետրածե ճյուղավորված ցուղունը ազատ պահվում է ջրի մեջ, և այդ է պատճառը, վոր նրան ալեկոծվող, հոսող ջրերում չես գտնի. լինում է ճահիճներում և այն ել նրա հանգիստ ջրերը ունեցող կողմերում: Նրա տերևները փետրածե մանրիկ ճյուղավորութուններով են: Տերևների ծայրերը մի քանի տեղ բշտիկներ, փամփշտիկներ են դարձել: Ամեն մի փամփշտիկը պղպեղի սերմի չափ կլիներ:

Փոքրիկ բնասերների ուրախությանը չափ չկար: Վարդգեսը հարցրեց.

— Հայկ, չես մոռացա, մի՞թե այս փոքրիկ փամփշտիկներն են բռնում միջատներին, այսքան փոքր...

— Յես հիշում եմ Վահանի ասածը, — ասաց Հայկը, — այո, հենց այդ փամփշտիկներով է բռնում վորսը. բայց վոչ թե մեծ ջրային միջատների, այլ նրանցից մի քանիսի թրթուռների և մանավանդ ստորին, պարզ խեցգետինների ազգին պատկանող կենդանիներին, ինչպես Դաճնի (կամ ջրային լու չեն ասում), Յիլլուպ, սրանք մանր են, այնպես վոր հեշտ են բռնվում... չեթե չեմ սխալվում, Վահանն ասաց, վոր մանր ձկների և գորտերի թրթուռներն ել կարող են բռնվել: Իսկ հիշում եմ՝ ինչպես ենբռնում...

— Այո, այդ չեմ մոռացել. փամփշտիկը նեղ ծայրին, մի փական ունի. վորը դեպի ներս է բացվում. հենց այդ կողմը բշտիկի վրա ծաղիկներ կան: Ուրեմն, չերբ վորսը սրընթաց խփվում է փականին, ուս բացվում է, կենդանին ներս է ընկնում, բայց դուրս գալ չի կարող վորովհետև փականը դեպի դուրս չի բացվում:

Բնասերների լսածը շատ ճիշտ է. իսկապես հենց միջատակեր փամփշտիկն իր համար այդպես է կենդանի մնունդ վորսում: Մի քանի որ անց, մեռած կենդանիների հյութերը ծծվում են բույսի մեջ և տարածվում, անհրաժեշտ նյութերը նրան տալով:







